


ՊԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
Հարկաւ գինն և Պարտոյ հարկ 8 ՄԷՏ
Վարձաւագ 10 ՄԷՏ
Վարձաւագ 4 ՄԷՏ
Վարձաւագ 5 ՄԷՏ
Իւրաքանչիւր թերթի գինն 60 փոյ
Գրանցման տոցը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, ա երկու անգամի հա-
մար զատու անգամի հաւելումն 4 լի-
նիս :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 3 ՅՈՒԼԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պաշտօնական հեռագրալուր մը
կը ծանուցանէ թէ վիճակաւ կայ-
սերական զորաբաժինը չորեքշաբթի
օրը յաղթութիւն մը տարեր և Սեր-
վիացոց մէկ քաղաքը դրաւեր է,
որոյ անունն հեռագրալուրին մէջ
լաւ նշանակուած չերեւիր : Միւրեքով
և պարսիմատով լի 18 համբարանոց
կայսերական զօրաց ձեռքն անցեր
են, բայց պատերազմին միջոցին թըն-
դանօթաց կրակէն քաղաքն հրոյ ճա-
րակ եղեր է : Օսմանեան զօրքերը
քաղաքն ամրացնելու զբաղեալ են
եղեր : Եհնի-Վարօշի կողմէն սահմա-
նադրուին անցնող Սերվիացիք ալ ետ
քշուեր, և իրենց խորտակած հե-
ռագրական թերթը վերահաստատ-
ուեր են : Ուրիշ հեռագրալուր մը կը
ծանուցանէ թէ Միւրեքովիցայի կող-
մէն սահմանադրուին անցնող Սերվի-
ացոց հետ փախած վաթսուն եօ-
թանասունի չափ ընտանիք, երեք օր
Պալքանեանքուն մէջ անօթի մնալով,
իրենցմէ չորս կանայք տեղական իշ-
խանութեանց զրկեր և ծանուցեր են
թէ պատրաստ են հնազանդելու : Կա-
ռավարութիւնն ալ ասոնց խնդիրն
ընդունելով սայլեր զրկեր է զիրենք
բերելու համար, և մեծերուն օրը
կէս հոկայ, փոքրերուն ալ 100 տրամ
հաց կապեր է : Վիտինի կայսերա-
կան զօրաբաժինն հրամանատար Օս-
ման փաշային մէկ հեռագրալուրն ալ
կը ծանուցանէ թէ 2000 ի չափ Սեր-
վիացոց խումբ մը գնդապետի տե-
ղապահ Լիմն պէյին վրայ յարձակեր
են Պէլլիստոնդի կողմը փախի—Պո-
ղազ ըստած տեղը : Լիմն պէյը վաշտ
ու կէս զօրք ունէր, անմիջապէս դըն-
դապետ Հասան պէյն ալ անոր օգ-
նութեան զրկուելով, 3 ժամ պատե-
րազմէ ետեւ Սերվիացիք ՚ի փախուստ
գարձեր են : Հասան պէյ՝ փութիթօ
գիւղն առեր է, որ երեք հարիւր
տունէ կը բաղկանայ : Բայց պատե-
րազմին ժամանակ դիւղն այրեր է :
Զօրքերը բոլոր կենդանիները դրա-
ւեր են, 300 ի չափ հրացան և միւրք
առեր են : Թշնամոյն կորուստը մեծ
է, բայց պաշտօնական հեռագրա-
լուրը կայսերական զօրաց կորուստն
2 մեռեալ և 3 վիրաւորեալ կը ցու-
ցնէ : Հասան պէյ հրաման տուեր է
որ առաջ քայլ և Չուքա—Գարու-
սու ըստած տեղը Լիվա Սահմա փա-
շային հետ միանայ : Այս վերջինը
վիտինէն մեկնել է 3 փաշա հետեա-
կով, մէկ փաշա հեծելով և 6 թեղա-
նօթով : Ահմէտ փաշա վիտինի վրայ
յառաջացող Սերվիացիները Հայրիէ
գիւղին կողմէն պիտի պաշարէ, և
նոյն միջոցին Հասան պէյ ալ Չուքա—
Գարուսու պիտի հասնի :

Ինչպէս որ նախընթաց թուով ալ
ըսած ենք, Սերվիացոց և Գարա-
տաղոց հրատարակած հեռագրա-
լուրերն Օսմանեան պաշտօնական
հեռագրալուրոց ծանուցած բոլոր յաղ-
թութիւններն իրենց կը սեփականեն :
Սերվիացիք օր կը ծանուցանէին թէ յու-
նիս 22 ին Չէրնայէֆ զօրապար Եհնի
քէյիւ կողմն յառաջանալով Ագ—Բա-
լանկան առեր է, թէ Ալիմիշի զօ-
րապար Պէլլիսայի արտաքին ամրու-
թիւնները դրաւեր է, թէ Նիշի կող-
մը Սերվիացիք Պալքանա—Կլավայի
վրայ յարձակելով Օսմանեան զօրաց
ամուր բանակետին առեր են, թէ
Սայազի վրայ յարձակող զօրքերն ետ
մղուեր են և այլն և այլն : Սերվիացոց
այս լուրերուն ինչպիսի արժանահա-
ւատ ըլլալը գիտնալու համար, բա-
ւական է ըսել թէ Պալքանա—Կլավայի
մէջ ո՛չ Օսմանեան զօրք, և ո՛չ ամուր
բանակետ կայ : Յայտնի է որ, ըստ
Օսմանեան պաշտօնական հեռագրա-
լուրոց Սերվիացոց կորուստը մինչև հի-
մայ տասն հազար հոգի կը հասնի :
Ուստի բնականաբար Պէլլիսայի մէջ
զարհուրանք կը տիրէ, և խաղաղու-
թեան կուսակիցները խտուի կը մե-
ղադրեն պատերազմաւորաց յանդու-
գըն ձեռնարկը :

Լիվիւնի Հէրլըտ լրագիրը կըսէ
թէ մայրաքաղաքիս դեպքանաւորու-
ները լուր առած են չորեքշաբթի օ-
րը Եհնի—Պաղարի կողմն եղած պա-
տերազմի մը վրայ, ուր Սերվիացոց
յարձակման արդիւնքը տակաւին
յայտնի չէ եղեր : Եթէ Սերվիացիք
Եհնի—Պաղարը կարենան առնուլ,
Գարատաղի հետ Սերվիացի հաղորդակ-
ցութիւնը կը գիւրանայ, և Պոնիա
ու Հերսէք կայսերական երկրին ու-
րիշ մասերէն կը բաժնուին : Հետեա-
բար կայսերական երկրորդ բանակին
հրամանատար Տէրվի փաշային հրա-
ման գնացեր է որ Մանասլըքէն Եհ-
նի—Պաղար երկրի և հին գտնուող
Մէհմէտ Ալի փաշային զօրաբաժինն
ստուարացնէ : Եհնի վարօշի և վիշ-
կըրատի կողմերը Սերվիացիք յաղթը-
ւեր են, բայց պատերազմին մանրա-
մասն պարագայները դեռ ծանուց-
ւած չեն : Իսկ Բատիօրիցայի կողմը
Մէտուռի և Բրէնիցայի պատերազմ-
ներն Ահմէտ Համիտ փաշային հե-
ռագրալուրերուն ծանուցածին չափ
որոշապէս նպատաւոր չեն եղեր Օս-
մանեան զօրաց, կըսէ վերոյիշեալ
թերթը : Աստիք են ահա երկու օրէ
՚ի վեր եկած պատերազմական լրոյ
բաղանդակութիւնն, ամեն տեսակ
աղբիւրներէ քաղուած, Օսմանեան
պաշտօնական հեռագրալուրերէ, Սեր-
վիացոց և Գարատաղոց հրատա-
րակութիւններէ և դեպքանաւորաց
տեղեկութիւններէ : Բայց ընդհանուր
տեսութեամբ, եղրակացութիւնն Օս-
մանեան զօրաց նպատաւոր է :

Պուրջարտանէն առնուած լու-
րերը կը ծանուցանեն թէ ապստամ-
բութիւնն “հրոյ և արեան մէջ” խեղ-
դուեր ու անհետ եղեր է : Կառա-
վարութեան ձեռք առած զօրք մի-
ջոյները վերջ տուին այս ապստամ-
բութեան : Չուքա անցած ապստամ-
բաց շատերը մահուան պատիժ կրե-
ցին : ասոնց մէջ շատ մ’եկեղեցա-
կաններ և դասատուներ կային, Ռու-
սիոյ մէջ դաստիարակուած, որք Պու-
ղարաց մէջ կրթութիւնն արժան կեր-
պիւ կը ծաւալէին, բայց այնպիսի
կրթութիւն մը, որ ապստամբութեան
և հետեւաբար կախաղանի կառաշնոր-
դէ : Պաշը—Պօղուգներն ու Չէրքէզ-
ները սարսափելի խեղճութիւններ
գործեցին, և կըսուի թէ մինչև իսկ
արդ ճարակ եղած Պուրջար ընտան-
եաց մանկունք իբրեւ գերի վաճառ-
ւած են : Պատերազմի պաշտօնատու-
ներն հրաման տուեր է որ Պաշը—պօ-
ղուգներուն ու Չէրքէզներուն հըրո-
տակներն, որք Գանուբեան դաւա-
ռին մէջ երսուն քառասուն հազարի
չափ կեննեն, Սերվիոյ վրայ քալեն :
Մայրաքաղաքիս մէջ կամաւորաց զին-
ւորագրութիւնը մեծ փութով յառաջ
կերթայ Սպարապետի դուռը, և
յատկապէս ասոր համար ալ նպատա-
ներ կը հաւաքուին, որոց ստորագ-
րութեանց ցանկին գլուխը Բարձր.
Մեծ—Եպարքուն 230 լիրա, և Բար-
ձր. Միհմէտ փաշան 200 լիրա գը-
ւած են : Վսեմ. Սարգիս պէյ Պալ-
եան ալ կամաւորաց նպատի յանձ-
նաժողովին 300 Օսմ. ոսկի զրկեց :

Կորչաքոֆ իշխանին հռչակաւոր
յիշատակաբերը լրագրաց մէջ հրա-
տարակեցաւ : Թէ և այս դրուածը
Բ. Դրան չ’ներկայացաւ, բայց իբրեւ
պատմական յիշատակարան կարեւ-
րութենէ զուրկ չէ : Կորչաքոֆ իշխա-
նը Սէլանիկի գէպըն առիթ բռնելով
կառաջարկէ որ քրիստոնէից ապահո-
վութիւնը փախդի ենթակայ եղած
տեղեր, և մասնաւորապէս Իզմիր և
Լ. Պոլիս, տեղութիւնները նաւա-
տորմ զրկեն, որպէս զի միաբանօրէն
հսկողութիւն ընեն քրիստոնէից ա-
պահովութեան վրայ : Իսկ Հէրսէքն
ու Պոնիան խաղաղեցնելու համար
հինգ կէս կառաջարկէ, որք էին.
1՝ Եկեղեցեաց և տուներու շինու-
թիւն և ետ դարձող պատասպարեւոյ
ապրուստ՝ մինչև որ իրենց աշխատու-
թեամբ ապրելու կարող լինին. 2՝
նպատից բաշխման համար կէտը քը-
րիստոնէայիներէ և կէտն իսլամներէ
կազմուած լինի, ընդ նախագահութեամբ
Հէրսէքի Գրիստոնէի մը. 3՝ կուլի չժա-
ղելու համար Օսմանեան զօրքը քա-
նի մը յատկապէս սահմանեալ տեղեր
նստեցնել. 4՝ թոյլ տալ քրիստոնէից
որ իսմայլաց նման զէնքերին սրահեն.
5՝ հիւպատոսք բարեկարգութեանց

գործադրութեան վրայ հսկեն : Այս
գրութիւնն Ստրասիի ծանուցագրէն
ալ յառաջ կերթար, և աւելի կը ծան-
րացնէր անոր պարունակած առա-
ջարկութիւններն, որք ներկայ գտն-
ւային նեղ պարագայները նկատելով
էին կրնար ՚ի գործ դրուիլ : Ուստի
Բ. Դրան իրաւամբ մերժեց զայն,
և փոխանակ նախկին Մեծ—Եպարքոս
Մահմուտ փաշային նման մեծ մեծ
խտուումներ տալով առանց գոր-
ծադրութեան ձգելու, ներկայ նա-
խարար անկեղծ գիրք մը բռնե-
ցին : Ասոր վրայ Սլավ իշխանութիւնը
ալ պարտաւորեցան գիտնալ ձգելով
յայտնապէս պատերազմ հրատարա-
կել : Հէրսէքի և Պոնիոյ, և վերջերն
ալ Պուրջարտանի ապստամբութիւն-
ները Սլավ իշխանութեանց կողմէ
ծպտեալ պատերազմ մ’էին, անվեր-
ջանալի կերպարանք մ’առած. բայց
հիմայ յայտնի պատերազմը վախճան
մը պիտի ունենայ, որ չ’կրնար առա-
ջուանին չափ երկարաձգիլ և երկիրը
շարունակ զոհուրութեանց ենթարկել
փանի որ ապստամբութիւնը մերձա-
կայ երկիրներու օգնութեամբ մնա-
նելով անէր, Բ. Դրանը պարտաւոր
էր սահմանադրութիւնին ստուար բա-
նակներ պահելու, որով արտաքուստ
խաղաղութեան վիճակի մէջ պիտի
երեւնար, բայց պատերազմի ծանր
ծախք պիտի ընէր : Այժմ վիճակը
պարզեցաւ, և վախճանն ինչ որ ալ
ըլլայ խաբուսիկ վիճակէ մը նախա-
դաս է :

Ահաւասիկ Կորչաքոֆ իշխանին յիշատակաբերը .

Թուրքիայէն հեկած երկրագլխի լու-
րերն հարկ կը դնեն Եւրոպական կառա-
վարութեանց վրայ որ իրենց համաձայ-
նութիւնն ամրապնդեն :

Երեք կայսերական արքունիք ինք-
զինքնին պարտաւոր համարեցան ՚ի խոր-
հուրդ գումարի և ներկայ վիճակին վը-
տանգներուն առաջն առնելու ջանալ
միւս քրիստոնէացի մեծ տեղութեանց հետ

Ըստ իրենց խորհրդածութեան, Թուր-
քիոյ ներկայ վիճակն երկու կարգի մի-
ջոյներ կը պահանջէ :

Ամեն բանէ առաջ ստիպողական կե-
րեւի որ Եւրոպա՝ Սէլանիկի մէջ անցած
և Իզմիրի ու Լ. Պոլսոյ մէջ ալ անցնելու
փախդ սպառնացող անոնց վերադարձն
արգիլող ընդհանուր միջոցներու վրայ
խորհի : Ասոր համար պէտք է որ, ըստ
իրենց կարծեաց, մեծ տեղութիւնք մի-
ջոյներ ձեռք առնուին, որպէս զի Օսման-
եան տեղութեան հողին մէջ բնակող ի-
րենց ապրակցաց և համայն քրիստոնէից
ապահովութիւնը պահպանուի :

Այս նպատակին կը թուի թէ կրնան
հասնիլ երբոր համաձայնութեամբ որո-
շեն պատերազմական նաւեր զրկել սպառա-
նացեալ տեղերն, հրահանգ տալով հրա-
մատարաց որ լարեկարգութիւնն ու խա-
ղաղութիւնը պահպանելու համար ՚ի հար-
կին զէնքով գործակցութիւն ընեն միմ-
եանց : Սակայն այս նպատակին կատա-

լեւալայն հասնելու համար՝ յուզմանց զըլ-
խաւոր պատճառն հարկ կըլլայ վերցնել՝
Հէրսէն ու Պոսնիան արագապէս խա-
ղաղեցնելով :

Եւ տէրութիւնը արդէն այս նախ-
տակաւ 'ի խորհուրդ զուսմարեցան վեր-
ջին դէպք. 30ի պաշտօնադրին մէջ ձեռք
առնուած նախորդման վրայ, որպէս զի
յիշեալ գաւառաց բնակիչներուն վիճակին
խրական բարեփոխում մը ձեռք բերեն՝ ա-
ռանց քաղաքական ներկայ կազմութեան
գաղափար :

Այս կրկին նպատակներուն նպատա-
խանելու սահմանաւ բարենորոգմանց
հիմնադիր մը խնդրեցին Պոսնիէն : Հա ալ
ընդունելով այս խնդիրն՝ յայտնեց թէ
յիշեալ բարենորոգմանքը գործադրելու
հաստատապէս մտադիր է : և այս յայ-
տարարութիւնը պաշտօնապէս կառավա-
րութեանց հաղորդեց :

Արեւել թաղայական իրաւունք մը ծա-
ղեցաւ կառավարութեանց համար՝ սոյն
խոտման կատարման հսկելու, և մի-
անգամայն պարտականութիւն մը ծաղե-
ցաւ պահանջելու, որպէս զի թէ՛ աղքատ-
տամբ և թէ՛ ապաստանալը սոյն հաշ-
տարար գործին օժանդակեն՝ կոխը
դադրեցնելով և իրենց տեղերը դառնա-
լով :

Սակայն այս խաղաղարարութեան
ծրարդին որչափ և սկզբամբ ամեն կող-
մերէն ընդունուեցաւ, կրկին դժուարու-
թեանց պատահեցաւ :

Այստեամբ յայտնեցին թէ անցելոյն
փորձը թոյլ չէր տար իրենց Գրան խո-
տմաններուն հաւատալ, մինչև որ Եւրո-
պայ կողմէն նիւթական ստորգ երաշխա-
ւորութիւն մը չտեսնեն :

Գրան յայտնեց իր կողմէ, թէ քանի
որ ապստամբը զէն 'ի ձեռքին պաշտօն
երկրին մէջ և օտար երկիր փախչողներն
ալ իրենց տեղերը չվերադառնան, նիւ-
թական անհնար է իրեն՝ երկրին նոր վե-
րակազմութեանը ձեռնարկել :

Թշնամութիւնը նորէն շարունակել
սկսան : Ութամեակի կռուին պատճա-
ռած յուզմանքը Թուրքիոյ ուրիշ կողմե-
րէն ալ ծաւալեցան : Մահմադական ժո-
ղովուրդը եղբայրացեցին թէ Գրան 'ի
վերին երեստ միայն հաւանութիւն ցոյց
տուեր էր Եւրոպայ տառապելութեանց,
իսկ իրօք գիտաւորութիւն չունէր խո-
տմանը բարենորոգմանը լրջութեամբ
դորձադրելու : Արեւել կրօնական և քա-
ղաքական կրից զարթում մը յառաջ ե-
կաւ, որոյ արդիւնքն եղաւ մատաւր՝ Սէ-
լանիկի ուղարկ անցնել և Օսմանեան կայս-
րութեան ուրիշ մասերուն մէջ տեսնուած
սպառնական գրգռութիւնը :

Անեղբայրեւէն է նաև, որ մուսու-
ղութեան այս բարբոթումը՝ միտքերն ա-
ւելի դրդեց Պոսնիոյ և Հէրսէնի՝ ինչ-
պէս նաև մօտակայ իշխանութեանց մէջ :

Քանզի Եւրոպական հիւպատոսներ-
րուն՝ ցերեկ ժամանակ, խաղաղ քաղա-
քի մը մէջ, անգոր իշխանութեանց տա-
քին առջև խոցողութեամբ խրատ գէշ տալա-
ւորութիւն ըրաւ ապստամբեալ քրիստո-
նէից վրայ, այն միջոցին որ յորդոր կը
կը կարգադրէր անոնց՝ երկար և կատա-
ղի պատերազմով մը զրգռեալ Թուրքաց
բարեկամութեան վտաճիլ :

Այս վիճակին եթէ երկարի, մեծ տէ-
րութեանց արդեւոր ուզած ընդհանուր
հրդեհը կրնայ բարբոթիլ :

Ուրեմն հարկ է մեծ տէրութեանց և
Գրան մէջ համաձայնութեամբ որոշուած
միջոցներուն անկեղծաբար և լիովին դու-
ծադրութիւնն անեղբայրեւի ընդլիք ինչ
ինչ երաշխաւորութիւններ հաստատել :
Ամեն ժամանակէ աւելի ստիպողական
հարկ մ'է ծանրանալ Սլոլթանին կառա-
վարութեան վրայ, որպէս զի Եւրոպայի
առջև յանձն առած պարտականութիւն-
ները սրտի մտօք կատարելու ձեռնարկէ :
Եւ իրեն առաջին քայլադրս այս ճան-
քուն մէջ, երեք կայսերական կառավա-
րութիւնը կառավարելն որ մեծ տէրու-
թեանց միտքեալ ձայնին ունենալիք բո-
լոր զօրութեամբ պնդեն Գրան քով որ-
պէս զի երկամեակ զինադադար մ'ընէ :

Այս պայմանաւորութեամբ թոյլ կուտայ Եւ-
րոպական տէրութեանց ներդրածի ա-
պրատմանը և ապաստանելոց վրայ, և
մատակարարելու ազդեղ անոնց՝ Եւրոպայի ա-

չաղութը հոգածութեան վրայ, ներդրածել
նաև մօտակայ իշխանութեանց վրայ՝ յոր-
դորելով որ այս հաշտարար ջանքը ար-
գէք չըլլան, վերջապէս ներդրածել Օս-
մանեան կառավարութեան վրայ, որպէս
զի իւր խոտմանը կատարէ : Այս կեր-
պիւ կրնայ ճանաչալ բացուիլ Պոսնիոյ և
Հէրսէնի պատգամաւորաց ուղղակի Գրան
հետ բանակցելու՝ այն հիմանց վրայ՝ զոր
ցոյց տուին և որք բանակցութեան մ'ըն-
կեցնակէտ ըլլալու բաւական դատուե-
ցան :

Այն հիմերն են հետեւեալը .

1. Եւր դարձող փախստիկ տուե-
րուն ու եկեղեցեաց վերադիւրութեան
համար պէտք եղած նիւթերը պիտի տըր-
ուին անոնց, նմանապէս՝ մինչև որ իրենց
աշխատութեամբ ապրելու կարող ըլլան,
ապրուստին պիտի հոգացուի :

2. Քանի որ օգնութեանց բաշխումը
Թուրք տեսուչէն կախում պիտի ունենայ,
յիշեալ տեսուչը՝ ձեռք առնուելիք միջոց-
ներուն վրայ պէտք է խորհրդակցի գեկտ.
30 ի ժանուցադրին մէջ յիշուած խառն
յանձնաժողովին հետ, որոյ պաշտօնը
պիտի ըլլայ բարենորոգմանց խցի մտօք
գործադրութիւնն երաշխաւորել և անոնց
կատարման հսկել : Յիշեալ յանձնաժողովին
պիտի նախագահէ քրիստոնէաց Հէրսէնի
մը, և անդամներն երկրին երկու կողմէն
հաստատարապէս ներկայացնող անձինք
պիտի ըլլան, որ զինադադար եղածին
պէս պիտի ընտրուին :

3. Որ և է կիւր չպատահելու համար,
խորհուրդ պիտի տրուի 'ի Արշիւի որ Օս-
մանեան զօրքերն որպէս տեղ մը կեդ-
րոնանան, դո՛ւն մինչև որ մտադ զըրգ-
ռութիւններն հանդարտին :

4. Քրիստոնէայք ալ Տաճկաց պէս ի-
րենց զէնքը պիտի պահեն :

5. Տէրութեանց փոխանորդներն հըս-
կողութիւն պիտի ընեն բարենորոգմանց
ընդհանրապէս դորձողութեան և մաս-
նաւորապէս փախչողներուն իրենց տեղը
վերադառնալուն վերաբերեալ իրաց վը-
րայ :

Եթէ մեծ տէրութեանց բարեփոխ-
կան և սրտագին ձեռնուրութեամբ և
զինադադարի շնորհիւ սոյն հիմանց վրայ
կարգադրութիւն մը կարենայ կնքուիլ և
անմիջապէս 'ի դորձ գրուի՝ փախչողնե-
րուն վերադարձումին և խառն յանձ-
նաժողովը ընտրութեամբ, խաղաղու-
թեան հասնելու ճանքուն մէջ մեծ քայլ
մ'առնուած կըլլայ :

Իսկ եթէ զինադադարի պայմանա-
ժամն աւարտի և մեծ տէրութեանց ջան-
քերն իրենց նպատակին հասնելու չյաջո-
ղին, երեք կայսերական արքունեաց կար-
ծիքն այս է որ այն ժամանակ հարկ կըլ-
լայ՝ ընդհանուր խաղաղութեան շահուն
պահանջման համեմատ՝ շարեաց ծաւա-
լումն արգելելու համար պէտք եղած ազ-
դու միջոցներուն գործադրութեան մա-
սին համաձայնութիւն մ'աւելցնել իրենց
ղեկանալ իրական գործողութեան վրայ :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Երբեմն իշխանի կառավարիչ Ակ-
եաճ Էֆենտին վերստին նոյն դաւա-
ռին կառավարիչ անուանեցաւ :

Վեհ. Սլոլթանն երէկ հանդիսիւ
Տոլմա-Պաշէնի՝ Վալիտէ ճամիւի մըդ-
կիթն երթալով՝ միջօրէի աղօթքին
ներկայ գտնուեցաւ :

Պոսնիոյ կուսակալին կողմէ՝ յուլիս
12 թուով Բ. Գրանն եկած հեռագիր
մը հետեւեալ լուրը կուտայ .

Նշելիքն է և կաշքօր մէջ տեղը
սաստիկ կռիւներ ըլլալով Սլոլթ միա-
շան մեծ յաղթութիւն մը տարաւ
Գարաառաղցեաց վրայ և Նշելիքնի զօ-
րաց հետ միացաւ :

Երեկուան Լա թիւրքի մէջ հե-
տեւեալ հեռագիրը կը կարգանք վի-
տինէն յուլիս 13 թուով գրուած .

Երէկ կայսերական զօրաց և Սեր-
վիացեաց մէջ սկսած կռիւը մինչև ի-
րիկուն տեւեց : Մութը կոխել էր և
տակաւին մեք հոսկէց թնդանօթաց
սրտումը կը լսէինք :

Սերվիացիք և անոնց ձեռքը զին-
ւորեալ Պուլղարք կատարելապէս
յաղթուելով կանչօվայի բարձունքէն
Պրէկօվայի կողմը փախան, և իրենց
նահանջը շարունակելով և թիմօք
գետն անցնելով Սերվիա դարձան :

Կայսերական զօրաց հրամանա-
տար Ֆաղլը փաշան Սերվիացեաց ե-
տեւէն ինկած է, որք մեծ կորուստ
կրեցին : Հիմա բնաւ Սերվիացի չմը-
նաց այս կողմը :

Դարձեալ վիտինէն յուլիս 13 ին
իրիկունը նոյն լրագրին գրուած .

Երէկ, չորեքշաբթի, մինչդեռ
կանչօվայի կռիւը կը շարունակէր,
Սերվիացեաց Պրէկանին զօրավարը
10000 մարդով Զայչարէն ելաւ և
իւր զօրքն երկու գունդի բաժնեց,
որպէս զի Օսման փաշայի հրամայած
զօրաբանակը կողէն զարնելով անոր
ամեն հազարակցութիւնները կարէ :

Օսման փաշան Սերվիացեաց ըն-
թացքն իմանալով՝ իշխօրէն ելաւ և
Սերվիացեաց հետ կռուի բռնուե-
ցաւ, որ մինչև իրիկուն տեւեց, և
վերջապէս Սերվիացիք յաղթուելով
խուճաւաւ Զայչար քաղաքացան՝ 350
մեռեալ և նոյնչափ ալ վիրաւոր թող-
լով :

Կայսերական Սլաւո-Հուն-
գարական դեսպանն հինգշաբթի օրը
ժանոյց Բ. Գրան թէ Գէլքի նաւա-
հանգիստն այսուհետեւ փակուած է
Օսմանեան նաւերուն :

Այս ողորման պատճառը Դաղմա-
տիկ և Խորուսթապոսին Սլաւոն-
րուն մէջ ծագած մեծ յուզմանքն
ու շարժումը կը համարուի, զոր Ա-
ւստրո-Հունգարիոյ կառավարու-
թիւնը նկատողութեան առեւով հա-
սարակաց կարծիքը գոհացնելու հարկ
տեսնել է :

Վառնայի վերջին շողերնուով ե-
կած Եւրոպական լրագրաց մէջ հե-
տեւեալ հեռագրաւորները կը տես-
նուին .

Բէշթա 4 յուլիս.
Լոյս լրագիրը կը ծանուցանէ թէ
Սերվիոյ կառավարութեան ձեռք
զինուորեալ 20000 նոր կամաւորք հե-
տըհետեւ Պէկրատ կը հասնին :

Ռակուդա 5 յուլիս.
Հէրսէնի մահմադականաց մէջ
մեծ սարսափ տիրած է Գորաառաղց-
եաց մօտենալուն պատճառաւ, ուս-
տի բերդերը կը փախչին կապաւտա-
նին :

Թուրք զօրքերն ալ դաշտերը
թողով ամուր քաղաքները կը քաշ-
ուին : Թայք

Պէկրատ 6 յուլիս.
Սլիւնիլ զօրավարն յաղթուած
չըլլալէ դատ՝ իւր հեռագրերն Օս-
մանեան հողէն կը դրէ : Պէկրնայի
պատնէներուն մէջէն դուրսէ մ'ա-
ռած և գերիներ բռնած է :

Պէկրատի կիսաբաժնին երկրորդ-
դասը վաղը պատերազմի պիտի եր-
թայ :

Օսմանեան զօրքը Պապինա-Կիւ-
վայի բանակետն ամբողջապէս թո-
ղուցին՝ բաց 'ի թնդանօթներէն :

Հաւա

Երէկ Եգիպտական Մահմուտէ,
Բահմանիէ և Դարալիէ շողերնուե-
րով գունդ մ'Եգիպտական զօրք հա-
սան մայրաքաղաք, և Տալութ փա-
շայի զօրանոցը գնացին :

Կըսուի թէ այս զօրադուեղը Կ.

Պուլոյ պահպանութիւն պիտի ընէ .
իսկ սպասուած երկրորդ զօրադուե-
ղը Սէրանիկի ճանքով պատերազմին
թատրը պիտի երթայ :

Մայրաքաղաքիս մէջ կամաւոր
զինուորագրութիւնը կը շարունակէ :
Սրգէն այս քանի մ'աւելոց մէջ գըր-
ւոյներուն թիւը տասն հազարէն ա-
ւելի է, որք հետզհետեւ Պէ.Պ.օղ կը
փոխադրին՝ երեք չորս օր հոն կըր-
թուելու և յետոյ Բուսէլի զրկուե-
լու համար :

Պէշիկթաշի մէջ յոյն տիկնայք
մասնաժողով մը կազմելով՝ թաղին
մոխթարներուն հետ Յունաց, Հայոց
և մինչև իսկ Թուրքաց տունները կըր-
թան, և կտաւ լաթեր, հին շապիկ-
ներ և այլն կը հաւաքեն և Պէշիկ-
թաշի աղջկանց վարժարաններուն
մէջ ծուռատի (թիֆթիք) փոխարկել
կուտան՝ ներկայ պատերազմին մէջ
վիրաւորելոց դարմանին գործածուե-
լու համար :

Կըսուի թէ մայրաքաղաքիս ոս-
տիկանութեան զինուորներէն հինգ
հազար մարդ պատերազմի պիտի
ղրկուին, և անոնց տեղ նոր մար-
դիկ պիտի ընտրուին, որոց մէջ խօք
կայ թէ՛ քրիստոնէայք և մասնաւորա-
պէս Հայեր ալ պիտի գտնուին : Ար-
դէն ստուգուած է որ կամաւոր զին-
ւորութեան գրուող հայերը քաղա-
քապահ զինուորութեան և ոստիկա-
նութեան պաշտօններու պիտի գոր-
ծածուին :

Վաքըթ լրագիրը կը ծանուցանէ
թէ Եգիպտոսի Խոյիվը 4000 պարկ
բրինձ շրջէր է կայսերական զօրաց
համար :

Դեպք 14 յուլիս	
Վաք. Գոն. 40 7/8	
Վաք. 1863	42
» 1869	41 1/2
» 1874	46
» 1872	49 1/2
» 1873	44 1/4
Եգիպտ. 38 1/2	
Անգլ. Գոն. 94 15/16	

Իրիկուն 14 յուլիս	
Բաշկալ Միտիկ-Օրդէն 6	
» Ֆայր Տօլէրաճ 4 1/8-1/4	
Ծախուած 40000 հակ	

ԼՈՍՍԱՆՆԵՐԵՆԸ	
ԵՍԱՍԵՐ ՈՍՏՈՒՄԻԸ	
2 յուլիս. ուրբաթ իրիկուն	11.33
3 յուլիս. շաբաթ արեւոտ	
բացուեցաւ	11.33
ժամ 4 ին	11.34

Կ. Պօլիս 2 յուլիս	
Վաք. Գոն. 40 7/8	
» 1863	42
» 1869	41 1/2
» 1874	46
» 1872	49 1/2
» 1873	44 1/4
Եգիպտ. 38 1/2	
Անգլ. Գոն. 94 15/16	

ԵՍԱՍԵՐ ԳՐԱՐՈՑ	
2 ՅՈՒԼԻՍ	
Սնդ. Կրա. Գոն. 40 7/8	20
» 1863	42
» 1869	41 1/2
» 1874	46
» 1872	49 1/2
» 1873	44 1/4
Եգիպտ. 38 1/2	
Անգլ. Գոն. 94 15/16	

Ա. Զ. Գ. Յ. Յ. Ն.

Սնդ. Կրա. Գոն. 40 7/8
Եւրոպական ժողովը՝ տէրութեան բան-
տերուն մէջ փակուած աղջկանոց
թուոյն և վիճակին վրայ ամեն ժա-
մանակ տեղեկութիւն ունենալու հա-
մար՝ ոստիկանութեան գրան գոր-
ծակաւոր Յարութիւն էֆենտին

